

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Անտեսանելի աստիճաններով
Լույսի հեղեղով, զվարթուններով,
Երկնքի անհաս աստղերի միջով
Իջար Հայաստան, Միածին Որդի:

Էջքովդ աննման հողն իմ օրհնեցիր,
Քեզ տուն շինեցիր, մեզ հետ ապրեցիր,
Քո լույսով, հույսով մեզ նորոգեցիր,
Դարձար հավերժի աղբյուր անսպառ:

Ծաղիկ գերահրաշ, Սուրբ Էջմիածին,
Ճաճանչ գերապանծ հավիտենական,
Նշխար պահպանված նախնյաց հավատի,
Ղողանջ հաղթության իմ ժողովրդի:

Փա՜ռք հավերժ լույսիդ, նոր արեգակին,
Փա՜ռք Աստվածածին սուրբ կույս Մարիամին,
Փա՜ռք Երրորդության եռյակ անձերին,
Փա՜ռք քեզ, Միածին Սուրբ Էջմիածին:

03.05.93

ՀՈՐԴՈՐ

Որդյա՛կ, գարնան մի ծառ տնկիր,
Հայրենիքի պարարտ հողում:
Նախնյաց հողում մի ծառ տնկիր՝
Բազմաթևյան իբրև խաչքար:

Մի ծառ տնկիր մեր դաշտերում,
Հողը խոպան ծաղկազարդիր,
Զոհվածներին որպես խաչքար՝
Մեր դաշտերում ծառեր տնկիր:

Կյանք է ծառը՝ գարնան երգով,
Ծաղիկ՝ պտղով, տերևներով:
Բերք է ծառը՝ տունը լցնող,
Սեղանները մեր ճոխացնող:

Կյանքի դաժան ցուրտ օրերին,
Ծառն արև է՝ լույս պարգևող:
Ծառն արվեստ է՝ նուրբ ձեռքերով
Հյուսված երգ է՝ սեր նվագող:

Ծառն ընտանիք է ճյուղերով,
Ծառավիղ է նոր ոստերով,
Ծառն արմատ է հաստատ, զորեղ,
Տապան է նա ազատագրող:

Որդյա՛կ, գարնան մի ծառ տնկիր,
Այգու տաքուկ մեկ անկյունում,
Ծառի նման ճյուղավորվի
Թող ընտանիքն ամեն հայի:

24.01.93

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

Գիշերն ամբողջ դու լալիս ես երդիկում,
Արցունք-արցունք իջնում հանդարտ որպես երգ,
Գարնա՛ն անձրև, դու օրհնություն, խնդություն,
Իջիր հուշիկ մութ գիշերվա դաշտերում:

Որքա՞ն քաղցր է հնչում քո երգն իմ սրտում,
Ինձ տանում ես քո թևերով անհունին,
Թռիչք տալիս երազներիս ու մտքիս
Անձրևի երգ, համանվագ, երկնառաք:

Ինձ հանձնում եմ քո նվագի թովչանքին,
Թռչում հեռու աշխարհները հեքիաթի,
Անհագ տենչով երանության, խնդության,
Արբենում եմ սուրբ բաժակից բնության:

Իջի՛ր, անձրև, խոր գիշերվա դաշտերում,
Երգի՛ր քաղցրիկ մեղեդիներ ինձ համար,
Ուրախություն, առատություն դու բաշխի՛ր
Մեր դաշտերին, մեր սեղանին, մեր սրտին:

03.06.93